

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ


Ն. ՔՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ սր եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի

ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՍՏԱՆԻՆԻՆԻՆԻՆ

ԵՂԻՐ. ՁԵՆԻ ՀԱՄԱՐ	
Նամակ կամ սր	60
Վեցանեակ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան	20
Վեցանեակ	12

Բնօրինակը կ'ունենայ
եւ թղթատարի ծախքը
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղուած
գրութիւնք է՝ չ'են տրուիր

ԱՂԻՐԱՐՈՒԹԻՒՆԻՐ
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHEALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՄՐՑԻԼ ԶԸ ԳԻՏԵՆՔ

Երբեմն, անշուշտ հին, բարի, երջան-
կայիշատակ ժամանակները կ'ահնարկեմ,
եգիպտահայութիւնը լաւագոյն դիրք մը,
ակնածելի տեղ մը կը գրաւէր Փարսոն-
եան այս շահաստաներուն մէջ. առեւտրի,
գործունէութեան և պատուոյ տեսակէտ-
ներով չ'կար գուցէ ասպարէզ մը, ուր
Խալիֆա Արմէշիլիս վարիչ մատը, կամ
անոր ստուերը չ'գտնուէր :

Խտիվական տան շուրջը, կառավարա-
կան բոլոր հաստատութեանց, փոքր թէ
մեծ ընկերութիւններու, և առ հասարակ
ամեն բանի մէջ հայու ներկայութիւնը օ-
րէնքի կարգ դասուած զգալի պահանջ մ'էր
նկատուած :

Օտարներու վրայ թողուցած երբեմնի
մեր այդ հեղինակաւոր դերը ո՛չ ոք կըր-
նայ ուրանալ թէ մեզ համար շատ պատ-
ուարեք արժանիք մ'էր :

Եթէ անդրադառնանք այդ երջանկա-
յիշատակ օրերուն, դիւրաւ պիտի համոզ-
ուինք թէ մեր այս անդի գաղութը եթէ
ունեցած է Եգիպտոսի մէջ պատուաբեր մի
չլինէր, այն ալ հին օրերու այդ շրջանն է
եղած, որուն յաջորդած է այս աւուր անկ-
ման խոշոր շրջանը :

Ինչո՞ւ այս փոփոխութիւնը : Միթէ
հին օրերու հայը այս աւուր հայէն աւելի
խելօք, աւելի ճարպիկ, գործունեայ ու
բանիմաց էր . միթէ մեր տոհմային յատ-
կութիւնները աւելի բխայուցած ենք . մի-
թէ միջավայրը փոխուած է, ու ալ Եգիպ-
տոսը ամուլ, անպտուղ անապատ մ'է հա-
յուն համար : — Երբէ՞ք :

Հայը չէ գիտցած կամ չուզեր գիտ-
նալ թէ այս օրուան Եգիպտոսը գործունէ-
ութեան տեսակէտով չէ մնացած նոյն իսկ
ասկէ մէկ տասնեակ տարի առաջ եղող Ե-
գիպտոսը, ուր իր ստորագրութիւնը դնել
չ'գիտցող հայ մը յանկարծ առիթէն օգ-
տուելով քմահաճոյքի մը բերմամբ ծառա-
յութենէ փաշայութեան աստիճանին կը վե-
րանար . պալատական քիւրճի մը միջ-
օններու կ'երկարեր իր թեւը, կամ վաճա-
ռականի մը քով ծառայող մէկ բանուորը
հարիւր հազարներու կ'տիրապետէր իր գոր-
ծունէութեան տալով այն զարկը որ ժամա-
նակի ոգին կը թռչաւորէր :

Անցեր են այդ հին, բարի ժամանակ-
ները, ուր, ինչպէս կ'ընեն սովորաբար, Ե-
գիպտոսի մէջ ուղծ արմաւ կ'արձարէր . Ա-

նոր յաջորդած է այսօր մրցման, պայքա-
րելու, ժամանակի ոգւոյն համեմատ խե-
լացի շարժուելուն շրջանը . ահա գաղտ-
նիքը այս աւուր յաջողութեան, որմէ մենք
բոլորովին չուրկ ենք և կը վարենք քնա-
չլիկի կեանքը :

Կուզենք շահիլ . բայց ի՞նչպէս . կու-
զենք երենալ . բայց մեր ցոյց տուած ո՞ր
արժանիքով :

Մեր անհատական ուժերը, սակաւ բա-
ցառութեամբ, չեն բաւեր, որ առանց ի-
րարու աջակցութեան մենք կարող ըլլանք
ոտքի կանգնիլ, մրցիլ, երենալ : Գոր-
ծեր կան, ուր միայն և միայն հաւաքա-
կան ուժերու կեդրոնացումը կրնայ մրցիլ
ու յաղթանակել, և, ընդհակառակը՝ անհա-
տական տկար ուժերը կրնան սպառուիլ
ու վասնզուիլ առանձինն գործելով :

Հրապարակը մեր ձեռքէն տուած ենք
արգէն ուրիշներուն, և յուսալի ալ չէ որ
մեր այս գործունէութեան եղանակով դար-
ձեալ տեղ գրաւենք այդ հրապարակին վը-
րայ . եւրոպացիներ իրենց արժանիքով և
դրամով, հրէաներ իրենց խորագիտութեամբ
իսկ յոյներ իրենց խրատ բռնեցող տիրեցին
այս շահաստանին . ասոնց դէմ հայերս ինչ
արժանիք ունեցանք . քնաչլիկի, բերա-
նաբացութեան, իրատ չը փաշայութեան
թիւններէն դուրս մեր ո՞ր հայկական յատ-
կութիւնը մնացած է արգէն : Ըստ երեւոյ-
թիւն դեռ քանի մը փայլուն ասպարէզներ
ունինք, որոնց կատարելագոյն տիրած կը հա-
մարինք . բայց եթէ լաւ նայինք անոնց խորը,
անոնք ալ չուտով ուրիշին յանձնելու շրջա-
նին մէջ կը գտնուինք :

Ի՞նչ է ասոնց բուն պատճառը . օրի-
նակը մեր հրապարակէն, մեզ հետ ապրող
ու մեզմէ վերջը գործի սկսող մեր դրացի-
ներէն վերցնենք . Յոյներու գործունէու-
թեան տիրապետութիւնը Եգիպտոսայուն
իբր ամենալաւ օրինակ կրնայ ծառայել :
Ոսկի վազող Եգիպտական հողին վրայ ի՞նչ
արտաքոյ կարգի գործունէութիւն է որ ու-
նին այդ մարդիկը . դրեթէ չ'կայ քաղաք մը
կամ ամենայնպէս գիւղ մը, ուր յոյ-
նը իր ոտքը դրած չ'ըլլայ ու չի յաջողի .
խելօք ու միացեալ ուժերով, իրարու եղ-
բայրական ձեռք տալով առեւտրական հրա-
պարակին տիրած են կատարելագոյն . կա-
ռավարական շրջաններու, պաշտօնատններու
և ընկերութեանց մէջ բարձր դիրքեր դը-
րաւած են . ամեն տեղ յունական բարքեր
լեզու, սովորութիւն ի հարկին նոյն իսկ
բունի ներմուծելու ջանք մը կերենայ . մէկ

խօսքով իրենք զիրենք իբրև պաշտօնական
գաղութ մը ցոյց տալու համար հրապարա-
կային և անհատական ամեն ճիգ կը թա-
փեն . իրենց ազգային տօները, երկրի սո-
վորութիւնները Եգիպտոսի մէջ աւելի ցուցա-
լից ազմուկներով կը կատարեն քան իրենց
ընիկ երկրին մէջ, ու այս բոլորը կ'ընեն
պարզապէս Ռեֆրանի ձեռով . իրենք զիրենք
քչելու արհեստը գիտեն : Անոնց յաջողու-
թեան բուն գաղտնիքը կը կայանայ « իմ
շահերս ամեն բանէ վեր են . ազգակցի՞ծ օգ-
նեմ որ յաջողի, անոր յաջողութիւնը ին-
ծի ալ օգուտ կը բերէ . եթէ անհատական
ուժս բաւական չէ գործ մը վարելու՝ ըն-
կերիս կամ դրացիիս հետ գործեմ առայլ
հիմքերու վրայ դրուած ընկերակցու-
թեամբ » : Մենք ի՞նչ ունինք ասոնց դէմ :

Այդ Եանիներու, Եօրիկներու, Ափօս-
թիւներու յաջողութեան գաղտնիքը միայն
իրենց ձեռնարկած գործերուն տեսակը չէ .
միայն գինեւորներ, ճաշարան, սրճարան,
հացագործութիւնը չէ, ասանք մէնք ալ
մեր կազմած թուի համեմատութեամբ ու-
նինք . անոնց յաջողութեան բուն գաղտնի-
քը սիւթեմաթիք գործի մարդը ըլլալն է .
ամեն բանի համար ձեռուոր, մարդը, ու
չահելու համար անխուտափելի հաշուով քայլ
ընելն է . Յոյներէն հարիւրին մէկը չ'սկսիր
բան մը որմէ պիտի չ'շահի, մինչդեռ մենք
հայերս 100 ին 200 անյաջողութիւններս կը
անենք, կ'սկսինք ու վերջը կը զղջանք .
վերջը չ'զղջալն ալ օգուտ չ'ընենք : Օր աւուր
կ'ընկնինք, ու մեր անկման պատճառը ո՛չ
մեր պաղթականութեան շատնալուն մէջ
փնտռենք, ո՛չ ալ մեր պաշտօնութեան մէջ .
քանի որ աշխատասէր և տոկոսի ըլլալն
մեծ արժանիք մ'է, մեր անկման մեծագոյն
բաժինը կը մնայ մեր իրար չ'բաշխուն, ի-
րար հետ հաւաքաբար չ'գործակցելուն ու
չըրազայեաց չ'լինելուն մէջ . Եգիպտոսայեցի,
աղքատութիւնը մեր բաժինը պիտի մնայ
մինչև այն օրը, որ մենք մեր վերքերը չը
ճանչնանք ու չ'բուժենք :


Ա . Վ . Օ

ԿԱՐՈՍՏԵՔ

Իբր բանասիրական հրատարակուած
« Պախալ Սարգիսի Երեկոյթին » աւարտու-
մէն վերջ, Տիար Ա. Պալեանի իրական կեան-
քէ առնուած մէկ նորավէպը :

ԵՍ ԱԼ ՄԱՐԻ ԵՄ
(ANCH'IO SON' UNOMO)


ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆ



Պ. Ս. Ֆ. ԼԵՌՆԱՍԻ աշխարհընէ սկսեալ զազրած ըլլալով Նիւ-Եորքի ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅԱ Ապահովագրական Ընկերութեան Ընդհանուր Գործակալի պաշտօնէն, կը խնդրուի ՊՊ. Դեր-գործակալներէ և Պատահասարակութեանէ, մինչև նոր Ընդհ. Գործակալի մը անուանումը, ընկերութեանս վերաբերեալ գործերու համար, գիմել՝ ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅԱ Նիւ-Եորքի Ապահովագրական Ընկերութեան Արեւելքի Դեր-Տնօրէն Պ. ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՌԻ, ԵՃԷՖՆԵՐՈ Օթէլ և կամ Ընկերութեան Դեր-Գործակալ առ Տ. ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՅ. ի Բաւաւստ Մարտոնոյ ճակիկն Պակ Ծրանակի դէմ:

Գահիրէ 23 Մայիս 1901
ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՌԻ

ԻՏԱԼԱԿԱՆ ՆԱԽՏՈՐՄԻՂԸ



«Յար» ի Հոռովի թղթակցին նամակը: Երբոր օտարական մը զիպուածով հրատարակէ 10 միլիոններու մասը այն բոլոր քաշկոտութիւններուն զորս Իտալացիները մոռնալու ունին գրելու իրենց հայրենիքին վրայ, բոլոր թերակղզին զայրոյթի ահազին աղաղակներ կը բառնայ, Վիզթօր էմմանուէլ Յրգ. ի իւրաքանչիւր հպատակը անձնականապէս նախառուած կ'զգայ ինքզինքը ու ալ bel paese ին մէջ բաւականաչափ անտառ չ'գտնուիր կախազաններ շինելու և անոնցմէ կախելու բոլոր այն յանցաւորները որոնք համարձակած են զէջ խօսիլ Իտալացիներուն դէմ:

Գալով Իտալացիներուն, ո՛հ, անոնց համար անսակ մը sport է իրենց հայրենիքին վրայ բոլոր շարունակները, բամբասանքները, զրպարտութիւնները թափելու հոգ չ'է թէ անոնք իրաւացի կամ անտեղի ըլլան, Իտալացիին կը սիրէ իր ազգային իշխանութիւնը զատափետել: Չ'կայ մարդ մը կամ բան մը որ կարենայ զեռմ մնալ այդ սիրելի մայրիք անարգանքի բաղնիքէն: Չեղի իբր սպացոյց պիտի յառաջ բերեմ միայն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ (7)

ԵՐԵՎԱՆԻ ՄՐԿԱՄ

ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

(Շարն. նախորդ թիւին)

—Չգէ՛ թող քիչ մըն ալ Յակոբ աղան ֆունկսու ընէ, աւելցուց Պախալ Սարգիս:

—Թող ընէ՛, էֆէնտիմ, թող ընէ, շիֆեսար... մը չ'է ես:

Գոհ էր հրամանատարութեանը ձգելուն, խաղը վտանգուած էր. Սարգիսին 8 ունէին, իրենք 3, Գոհ էր պտտասխանատուութեան մէկ մասը, գէթ մէկ քառորդը Եազմածի Յակոբին կոնակը անցընելուն:

Յաջողութիւնը Սարգիս աղային քովէն ասղին չ'եկաւ թիկնապահի մը պէս: Երբեք «սէքսէն» սով մը փակեց շարքը:

—Է՛, առիւր մի՛ երկուքին մէկը, ըրաւ բանջարավաճառը, յաղթական: Դիմումը գէշ խաղալէն զատ բոլոր սրտովը մաղթած էր որ Եազմածին յաղթուի: Մնափառութիւնը իր մէջ աւելի հզօր էր քան շահասիրութիւնը, և իր ուրախութեանը մէջ մոռցած իսկ էր թէ Եազմածինն նա կէտուակէս պիտի ցնծար պահիս վային գրամը:

Թուղթերը վերցուցաւ: Նարինջ հրամցուցին, երկու պնակ, Օ՛խ, ինչ զովութիւն:

նաւային պիւտճէի մասին առջի օրուան եղած վիճարանութիւնը:

Թուլօնի նաւահանգիստին օրը բոլոր Իտալացի օրագրողները նոյն իսկ անոնք որք խիստ մեծ հակառակութիւն մը և ատելութիւն մը չ'ունին Յրանսայի և Իտալիոյ միջև մերձեցման մը գաղափարին, որ երկու քայլ ազգերը անկեղծօրէն իրար պիտի միացնէ, բոլոր հրապարակազիրները բոլոր գիւտագիտները մտտանջօրէն ֆրանսերէն թերթերը կը կարգային տեսնելու համար թէ մաղձաւ գրիչէ մը պիտի սպրդէ՛ր արդեօք փոքր քննադատութիւն մը ֆրանսական նաւահանգիստին մէջ խորտակած Իտալական նաւերուն համար որոնք այնքան միլիոններ արժած են երկրին:

Վտաս կրնայինք ըլլալ որ առջին գէշ խօսքին բոլոր Իտալիոն միանաւագ պիտի բողբէր չար ու նախանձաւ քրոջը որ միշտ իր հոյր փորկու պատրաստ է: Ես որ անձամբ մէկ քանի ֆրանսացի սպաներ հարցափորձեցի տեսայ որ ամենն ալ, իրենց խղճի անկեղծութեանը մէջ հիտաքանչ մնացած էին Սալօնի տունէն իշխանի մը հրամանատարութեանը ասի զբանուող վիթխարի նաւատորմիդին վրայ:

Այդ թուականէն հազիւ ամիս մը անցած՝ ներկայ կրցայ գտնուիլ իրական վշտով մը, բոլորովին յակահանգիստի վիճարանութեան մը որ եղաւ մայիս մէկին և ևս ևս քանի մը օրեր:

Ս. Միքէլին, որ նաւային հարցերու մէջ վարպետ մըն է և գերակշիռ դիրք մը ունի, կը յայտարարէր անոնց որ և է մեղմաբանութեան թէ Իտալական նաւատորմիդը ազգային պաշտպանութեան պահանջին երբէք չ'էր համապատասխաներ: Ատիկա արագուցանելու համար Ս. Միքէլի մանրամասն analyse մը կատարեց Իտալական նաւատորմիդը կազմող տարրերը զբանաւորներու վրայ և սա եղբակացութեանը հասաւ թէ և նա առաջին կարգի նաւերէն «Տուրիլի» և «Մոնթիլի» և «Անտրէ Տօրի» և «Լաուրի» և բոլորովին անկարող են պատերազմի մասնելու, «Տանտոյ» և հակառակ իր վերջին փոփոխութեանց, շատ սահմանափակ արժէք մը ունի, «Սիչիլի» և «Սարտէնի» և «Ռէ Ումպէրթօ» և թէ ևս չուրին տակէն լաւ պաշտպանուած են սակայն ջուրէն դուրս մնացած մասերը անպաշտպան են թշնամիին թընդանօթներուն դէմ, միայն «Սէն պօն» ը և «Էմմանուէլէ Տիրիպպէրթօ» և զինուորականապէս պատուական զբանաւորներ են:

Ռոսակցութիւնը վերսկսաւ:

Ռոսկցան. խնդացին. սանկ նանկ բանկերով զբաղեցան. բայց կ'զգային թէ մաքերին ուրիշ տեղ էր, բացակայ իրենց խօսքերէն, օգրափոխութեան գացած հետունքը, Անգլիոն բոլորաբար: Անոնց վրայ կը խորհէին միշտ, անոնց կը նայէին երևակայութեամբ, անոնց կ'սպասէին տեսնուող, զանոնք կը քաշէին կարծես ֆրանց անհամբերութեան բոլոր շունաներովը: Որովհետեւ պէտք է գիտնալ որ Անգլիոն տեղ պահելու համար՝ գրեթէ ամենքն ալ հազիւ թէ պատաս մը բան կերած էին սունը, և գիշերը որչափ սր յատաշնար, ստամոքսին պարասն ալ երթալով կը լայննար կոր ու «անօթի եմ» կը պոռար:

Պախալ Սարգիս ժամացոյցին նայեցաւ. կէս գիշերը մէկ ժամ անցեր էր: Ճիշտ ասեան էր: Ոտքի ելաւ. ծանր ծանր հողաթափները հազաւ: Ամեն ոք հասկցաւ այս ոտքի ելլալուն նըշանակութիւնը: Նուիրական ու հանդիսաւոր բան մը կար Պախալ Սարգիսին գէմքին ու կեցողուածքին վրայ, ինչպէս քաւքի մը որ մեծ խորհուրդ մը պիտի կատարէ: Չայնքը իսկայն լընեցին, յարգալիբ: Պատմական յազումի խորունկ վայրկեան մը անցաւ ներկայից հոգիներուն մէջէն: Վերջապէ՛ս: Դէպի պահարան ուղղուցաւ Տանտէրը և հիւրերուն դառնալով:

—Դուք ձեր խօսքին նայեցէ՛ք, ըրաւ. և հոս պղպիկ «գործ» մը ունիմ ընելիք...
Մէկ քանի հոգիներ խնդացին. միւսներն ալ ձայնակցեցան, և ընդհանուր քրքրիչ մըն է փրթաւ, որ կը ծնէր ո՛չ անպատճառ «գործ»

Ս. Միքէլին անոնց ընդհատուելու կը շարունակէր իր գիտական և արուեստական քնննութիւնը և միջնակարգ կը գտնէր ի. կարգի զբանաւորները և քիչ յանձնարարելի Գ. կարգի նաւերը:

Պաշտպանուած զբանաւորներէն կ'ըսէր «Իտալիա» նաւափոխութեան մը կ'ենթարկուի որ 4 1/2 միլիոնի պիտի նստի և սակայն չը պիտի կրնայ հակառակ ասոր նաւը պաշտպանման վիճակի մը վերածել:

Աւելի գէշ են «Լիբանթօ» ին (որ թուլօնի նաւահանգիստի ծովակալներու նաւ մ'էր) և Յրգ. կարգի 14 նաւերուն վիճակը, որք միայն կրնան ծառայիլ իրբեւ զարոցանաւ և կամ հետաւոր ծովերու մէջ իրբեւ պահականաւ: Գալով այն 15 նաւերուն որք զոսաւորուած են իրբեւ 4րդ կարգի պատերազմանաւ տոնոց զինուորական արժէքը ժխտական է բոլորովին:

Ա. և Բ. կարգի 101 թորփիլանաւերէն հազիւ 7 հատը կրնան պատերազմի մասնել, միւսները եթէ փոփոխութիւն կրեն միայն կրնան իբրը կղերպապահ թորփիլանաւ ծառայել:

Պատուական երեսփոխանը խիստ կը ցաւի որ 1896 էն ի վեր ընդունիլ նաւերուն խնդիրը ձգուած է և երջանիկ կ'զգայ ինքզինքը անսնելով որ այս ասարոյ սկիզբը ատոնց խնդիրը ձեռք առնուեցաւ:

Երեսփոխանը համեմատութիւն մը ըրած է Յրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ նաւատորմիդներուն միջև և հետեւեալը հաստատած է՝ «ց'այսօր ունինք 14 պատերազմանաւ, Յրանսաւ 43 հատ, Գերմանիոյ 20 իսկ Ռուսիա 30 հատ, համեմատութեան տարբերութիւնը աւելի խոշոր պիտի ըլլայ և շատ ծանր քանի մը տարիէն, այն ժամանակ ֆրանսա պիտի ունենայ 30 նաւ, Գերմանիան 03, Ռուսիան 45, իսկ մենք եթէ այսօրուան պահանջուած պիտեմէն արուի և եթէ Աստուած ուզէ 22 հատ պատերազմանաւ պիտի ունենանք:

Եւ Ս. Միքէլին գիտողութիւնները հաստատելու համար նախկին ծովային նախարար ծովակալ Պէթթօր սպայն խօսեցաւ իր կարգին:

«16 զբանաւոր ունինք, 11 առաջնակարգ և 5 երկրորդ կարգի, շինուելու վրայ եղող «Ռէճինա Մարկէրիթ» և «Պ. Պրին» ը և «Տէրրուչի» և ալ մէկտեղ հաշուելով, իրենց պատերազմական արժէքը գտնելու համար պէտք է որ աչքերնս 1881, 85, 83 և 97 տարիները նետենք, անոնց շինուած ժամանակները: Երկու

բուէն, —որն որ «բան» բանին հետ հայ ընկերութեանց մէջ անհասնում կատակներու, թիւրիմացութեանց, լուրջայն-իմաստներու անսպաս հանք մըն է, այլ անուղղակի մէկ արտայայտութիւնն էր աւելի իրենց ներքին ուրախութեան, ասոր արձակած հրթիռը ի պատիւ հորիզոնին վրայ երեւցող Անգլիոն: Պախալ Սարգիս պահարանին դուրս բացու բանալիով, այդ վայրկեանին Պետրոս առաքեալի լուսերեւոյթ մը հազած էր կարծես ներկայ մահկանացուաց աչքին: Արքայութիւնը երեւցաւ ատոնց, ի շիջիբու և անթիւ պնակներու շարքիցի տեսարան մը բազմազրուաց ուր ներկայ աստորժակները մնացին յառա՛ծ, թաւա՛ծ...:

Նպարավաճառը սկսաւ շուկել «պրեֆէն» սեղանին վրայ, յոտնկայս, ի ներկայ սյուրթեան իր հիւրերուն: Նախ տեղաւորեց օղիի, գինիի և ջրի շիջիբու, յետոյ Անգլի պնակները, տեսնելու էր ինչ կոնտրապոնութեամբ, հանգարտութեամբ, ինչ «տանտիկնութեամբ»: Մեր շուկացիներուն մէջ տանտիկն էր իր մարդիկ շատ կան, որոնք ուսու խմելու վերաբերեալ մանր մուտք սպասարկութիւնները իրենք անձամբ կը կատարեն մեծ հաճոյքով և ձեռնհասութեամբ: Պախալ Սարգիս ի սոցանէ էր: Գրեթէ մէկ քառորդ ժամ տեւեց այս արարողութիւնը զոր նըպարավաճառը կատարեց լուս ու մուռնջ, պատարագիչ քահանայի մը սրբողան լրջութեամբ: Փորին խորանն էր որ կը շակէր կոր, և ասխորժակներուն պարը, շրջանակի, երկիւղածօրէն կ'սպասէր, հոգեզմայլ հայեցողութեամբ վերացած: Սեղանը բերուեցաւ բոլորին առջև, փութով շուրջը բոլորուեցան: Բանի մը պա-

չինուելու վրայ եղող նաւերով այսինքն «Վեր-
թօրիս էմմանուէլի» եւ «Ռէճինա էլէնա» ով
որք դեռ շատ ժամանակ կ'ուզեն աւարտելու,
մեր մեծ նաւերու թիւը 18 միութեան պիտի
հասնի:

«Չ'եմ հաշուեր «Լիբանթո» ն եւ ո'չ ալ
«Իտալիա» ն որք պակասաւոր են իրենց պաշա-
պանողական վիճակին մէջ, մանաւանդ հիմա որ
արագահարուած թնդանթներ ընդունուեցան եւ
սոսկալի հզօր պայթուցիկ նոսրագունդեր հնար-
ուեցան. նմանապէս չ'եմ հաշուեր ամենահին
ձեւով 6 զրահաւորներ, նոյնպէս նաեւ ստոր-
նակարգ անպաշտպան նաւերը:

Թորփիլանաւերէն մէկ կողմ կը ձգեմ Թօր-
նիզորֆթի ձեւով 3 կարգիները, ուրեմն առաջ-
նակարգ 7 թորփիլանաւ եւ 94 հատ երկրորդ
կարգի ունինք որ արագընթաց չ'են, ընդհակա-
ռակը մեր 11 destroyerները, որոնց մէկ մասը
դեռ չ'ինուելան վրայ է, ամենէն կատարելագործ-
եալներն են... Մեր ամենանոր զրահաւորները
93 էն առաջ ծրագրուեցան, 93 էն 97 ո'չ մէկ
նոր զրահաւոր չ'ինուեցաւ, մեր նաւարաննե-
րուն հանդիսար չ'խոսվուեցաւ... «Իտալիա» ն
ու «Լիբանթո» ն 1875 էն են...:

Նախկին ծովային նախարարը կտոր մը
այս յայտնութեանց տարուածքները թեթեւցուց
«Պօզան» ը, «Ուրանիա» ն, «Տօկալի» ն,
«Քասթիլիա» ը, «Ակորտաթ» ը գովե-
լով, որք սակայն քիչ գատողութիւն ունին:
Սակայն անմիջապէս խօստովանեցաւ թէ նա-
ւային չ'ինուելանները այնպիսի գանդաղու-
թեամբ մը յառաջ կը տարուին որ, ամենանոր
նաւերը, դեռ նաւարաններէն չ'ելած կը հին-
նան: 43 ամիս պէտք եղած է «Քարլո Ալպէր-
թօ» ն չ'ինուել համար...:

Վերջապէս երկուորեակ նաւերուն մէջ, ու-
րոյցմէն «Վերթօր Բիզանէ» նաւորի չ'ինուած է,
4, 34800 Քրանքի, իսկ միւսը «Քարլո Ալպէրթօ»
Սրէչիա չ'ինուած է 3000000 Քր. ի մէկ միլիօն
300000 Քրանքի տարբերութիւն կայ, ճիշտ ի-
րարու յար եւ նման նաւերու մէջ:

Երկու ճառերն ալ ծափահարուած են եւ
ճառասունները շնորհաւորուած են իրենց բարե-
կամներէն:

Ահաւասիկ Իտալական մարտանաւերուն
վիճակը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Համաձայն Ն. Բ. Խտիվի առաջին

աւանքը ու աղջիկներ բոլորակէն դուրս մնա-
ցին: Խեղճեք'ը:

Տանաէրը ատենար բացաւ աւանդական խօս-
քովը:

—Հայտեցէ՛ք տղաքներ, քիչ մը մեզեղիւնը
ըլլանք:

Սեղանը շքեղ տեսարան մը կը պարզէր ա-
չաց. կարծես Պախալ Սարգիս դիտաւորութիւն
ուներցած ըլլար զայն վերածելու ցուցադրավայ-
րի մը ուր գտնուէին իր ծախած շատ մը ապ-
րանքներու նմոյշները: Նպատակաւոր խա-
նութի մըն էր զրեթէ, իր ամենապարզ ձեւին եւ
փոքրագոյն համեմատութեանց վերածուած:
Թուեմ ու դասեցէ՛ք:

Հո'ն պանիրը ներկայացուցուած էր իր
բոլոր տեսակներով, քաղաւ թեկնի, աղած պա-
նիր, ջաշըր թեկնի, խաշըր թեկնի, պանիր,
որուն հոգի կուտայ իւսկիւտարցի հայը (իմա՛
բոլոր հայերը) որ աղքատիկ տուններուն մեծա-
գոյն նպարը, գլխաւոր պարէնն է... Պանիրէն
ետքը կուզար իր քոյրը, —կանաչ կամ սև,—
ձիթապտուղ. ա՜հա՛ մեզ հայոցս սիրական բան
մը եւս. ինչ ցեման կերպով մեծ անթութիւն-
ներ կը յաղեցնես, ո՛վ երեցս օրհնեալ հրօշ-
զործ ձիթապտուղ, պզտիկ հատերովք որոնք
համ ու հոտի ծրարիկներ են, մանրաշխարհներ,
եւ որոնց երեք կամ չորսին հետ ափ մը հաց
հատցնողներ գրեմ եւ... Հոն էր նաեւ գուն
համակրելի Չիբոզ, նիւա՛ր սիրուն արարած
որ Տարբճայէն կուզաս մեզի, եւ անոր ալ հա-
մերու բնաշխարհէն, գուն որ այնքան շնորհա-
լի կերպով գիտես կախուել նպարատուններուն

արարողապետի գրասենեակէն հաղորդու-
ածի, Ռայ-էլ-Պինի պալատին մէջ Յունիս 1
ինն տրուելիք պարահանդիսին հրաւիրեալ-
ներուն ցուցակը այժմէն բացուած է:

Հազարի չափ հրաւիրագրեր ցրուուած
են:

—Գահիրէի տեղային ստիկանատունը
Աղէքսանդրիոյ կառավարութեան հեռագ-
րած է թէ տաճկաց սպանացող հայը՝ որ
ձերբակալուած է, տեղափոխեն ի Գահիրէ:

Հայը ըսած է թէ այդ երկու տաճիկ
պաշտօնեաները Գահիրէի մէջ ազամանդե-
ղէնի գողութիւն ըրած են եւ նոյն իսկ ա-
նունը տուած է Գահիրէի մէջ գտնուող գա-
հարավաճառի մը որ գոհարեղէնին գող-
նաթափոյց եղած է: Գահարեղէնի գինը 1000
ոսկի կը հասցնեն. բայց տաճիկները կը
յայտարարեն թէ իրենք գնած եւ վճարած
են:

Այս պատճառներով ձերբակալուածին
գատաւարութիւնը Գահիրէ պիտի կատար-
ուի:

—Երէկ Գահիրէի երկաթուղոյ կայա-
րանին մէջ ձերբակալեցին Իւսէֆ Սալամէ
անունով մէկը՝ գողութեան պատճառով.
ձերբակալուածին վրայէն գտնուեր է լե-
ցուն ուէլովէր մը, 25 ոսկու արծողու-
թեամբ պանքնօթիներ եւ երեք ժամացոյց:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

—ԳՕԳ—

Տիար Մ. Անանեանց, Գահիրէի Հայոց
նորակազմ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
արտատպած «Ազգային Սահմանագրութիւն
Հայոց» գրքերէն մէկ օրինակ նուիրեց Գա-
հիրէի Հայոց Որչափոյց Ընկերութեան, որ
յանձնուեցաւ յիշեալ Ընկերութեան Պատ.
Գործ. Ժողովոյ Գանձապետին:

—Նոյնպէս Տիար Ս. Օտապաչեան յիշ-
եալ հրատարակութենէն մէկ օրինակ նուի-
րեց Լսարան-Ընթերցարանի, որ Տիար Կա-
րապետ Երզնկայեանի յանձնուեցաւ:

առաջքը: Հոն էր մօրեղբորորդիք աստեղային,
հօրեղբորորդիք՝ թթու կծու քուրջու պալլողիին,
եւ հեռուոր հարուստ ազգականը՝ իւղախառ յի-
ֆոնօզին հետ: Չ'եմ մտնար զքեզ, ո՛վ գուարթե-
րեղ կարմիր խալկար, աղքատին սևը, ոչ ալ
քեզ, անհաճական շափոսա: Էն վերջին պահե-
ցի — պատիւ արժանաւորաց — հոջակաւոր քաս-
տրուան, արեւելեան ժամպօնը, Կեսարիոյ պար-
զեւը մեզի, եւ Աստուծոյ տուրքը անոր, աղքա-
յին ուտելիքը զոր չի սիրողը Հայ չէ՛: Հոն էր ան
չքեղ շերտերով ուր սքանչելի գոյնով ճարպ մը
կ'ամուսնանայ փառաւոր կարմիրով լուսանցիկ
մսի մը հետ ծնկու համար հրճուանք աչաց եւ
համ անմահական քմաց մերոց: Աստուծէ հաքը
կարգաւ կ'ուզան տանտիկնոջ խոհարարական
հանճարին ծնունդ, անոր մատուցներուն հրաշ-
քը, —ժողովրդային բնասանիքներուն գլխաւոր
կերակուրը, գմայլելի լուրիան —բըսի, եանի,
բիյազ, —որ ամանութիւնը, համը ու սննդաբա-
րութիւնը կը միացնէ այնքան նշանաւոր կեր-
պով եւ ասոնց ալ կ'աւելցնէ իր օգուտոյց կա-
տակներուն խորժալուր կրածտութիւնը: Եւ...
... հոս խոհարարեցէ՛ք յարգանք օրովհետեւ ա-
րեւելեան խոհարարութեան գլուխ-գործոցները
պիտի անուանեմ ձեզի, նորին հրաշահամու-
թիւնը միտեայ եւ եայաւնի տղախալները: Մոռ-
ցուած չ'են բոլոր այս մեզիներուն եւ կերա-
կուրներուն հայցական խնդիրները, ըսել կ'ու-
զեմ՝ ուզած զանազան աղցանները, քուրջիկե-
րը, բողկերը... Դուք այդ մարդոց տեղը եղէ՛ք,
արեւելեան ճաշակին սիրական բոլոր այս բա-
ները գիտացնիք ունեցէ՛ք, եւ թող աչուրնիդ
անոնց պէս՝ ցանկութեամբ չի վաւին, թող

ԱՐՇԱԼՈՅՍի Տպարանէն մարտի 18 թիւը
թիւ վրայ շքեղ ապագրութեամբ արգէն
լոյս տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒ-
ԹԻՒՆ ՀԱՅՈՅ գիրքը՝ որը երկար տարիներ
է ի վեր սպառած էր:

Այս ութ ու կէս երկսիւնուկ մեծագիր
Ֆորմայով գիրքը Գահիրէի Հայոց Հրատա-
րակչական Ընկերութեան երախայրիքն է:

Կը վաճառուի «Արշալոյս» ի Խմբագրա-
տունը՝ եւ ի ԿՈՒՆ ԳԱՅԻՆ ԵՒ ՆԷ, Տիար Գառ-
նիկ Սիրունեանի օժիտական սրճարանի մէջ:

Իւրաքանչիւր օրինակի գինն է ԵՐԵՎ
ՖՐԱՆԿ:

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բեթէրսպուրկ 23 Մայիս. —Յուզիչ
յայտարարութիւններ գտնուած են ճանա-
պարհներուն վրայ ձգուած եւ պատերուն
փակցուած: Քաղաքի վերահսկողութիւնը
պահպաններ զրոյց է չորս տպարաններու
մօտ: 60 ի չափ ձերբակալութիւններ կատար-
ուած է որոնց մէջ կը գտնուին Զը կանայք:

Իտալիա 23 Մայիս. — Պրէստի, Իտա-
լիոյ Ումպէրթօ Թագաւորին սպաննիչը,
ինքզինք երեսարիչով կախած է բանտին
վանդակորմերէն:

Կ. Պօլիս 23 Մայիս. —Կ'իւնացուի թէ՛
եւ Լեւոնից նախկին նախարար Ռաշիտ փա-
չա, որ փախած էր, Իզմիր անցած է ուրկէ
պիտի մեկնի անգղիա. իր բնակարանը խու-
զարկուած է եւ գտնուած տօքլեմանները
գրաւուած են. փաշային ծնողքը եւ ընտա-
նիքը անյայտացած են:

Կ. Պօլիս 24 Մայիս. —Ժէճն-թիւրքե-
րու կողմէն ապստամբական մի գրութիւն
գտնուած է ստիկանապետի գրասենեակէն,
ուր ըսուած է թէ երեսասարգ թիւրքերու
վարչութիւնը, հակառակ իր ճիգերուն, չը
պիտի կարողանայ առաջըն առնել այն խը-
ռովայոյց ապստամբութեան, որ կը պատ-
րաստուի:

բերներնուղ ջուրերը չի վազէ, եւ անօթու-
թեան «ճանավար» ներք թող միահամուռ ոտքի
չ'իւլան եւ չի ճանկեն ներսիդիւնիդ... կարելի
բան է:

Սարգիս աղա վայկեան մը գիտեց այս
տեսարանը. դիտեց իր հիւրերուն տենչաղող
գէ՛մքերը, անյայց կլափները եւ որսին փառա-
ւորութիւնը, ու ժպտեցաւ աստուծոյ մը պէս:
Իր կենսականութեան գագաթնակէտը, իր էու-
թեան կատարը, իր ընկերական փառասիրու-
թեանց եղբակացութեանը հասած էր այդ վայր-
կեանին: Ստեղծողի, հրաշք գործողի հոգի մը ան-
ցաւ ներսիդիւնի: Երջանիկ էր եւ հօր:

Իջաւ այդ բարձրութիւնէն, որովհետեւ գըլ-
խու պտոյտ կ'զգար կոր եւ իր սովորական ճա-
նովը:

—Է՛ տղաք, հայտէ՛, սկսեցէ՛ք, ըսաւ. ու օ-
ղիները լեցուցէ՛ք առաջ:

—Տուէ՛ք եւ լեցնեմ ըսաւ. Եազմաճի Յակո-
բը որ իր նմանը չ'ունէր բաշխելուն, չափով
բաժնեւորուն, լեցնելուն, շէնքով շնորհքով հը-
րամոցներուն մէջ: Այս տեսակ հաւաքումներու
մէջ անպտկաս է ասանկ տիպար մը:

—Ուզողին մասքիս, ուզողին ալ ճիւղ
տուր. ըսաւ Սարգիս աղա. ուզողն ալ թող գի-
նի իմէ:

Երկիւղածօքէն, կարծես իր կատարած գոր-
ծին վսեմութեամբը մինչեւ հոգին թափանցը-
ուած, կամաց կամաց, չափելով չափսփելով,
զգուշութեամբ, չըջանայեցութեամբ եւ մա-
սամբ նորին: Եազմաճի Յակոբ լեցուց գաւաթ-
ները, բաժնեց:

(Շարունակելի) ԴԻՏԱԿ

— Բարեկարգելի նիւթեցիւթաւորական հնու- թեանց նորակառուց թանգարանը կ'աւար- տի յառաջիկայ տարուան նոյեմբերէն գեկ- տեմբեր . ներքին բարեկարգութիւնները ի- րենց վախճանին կը մտնեն . Միւլէի շի- նութեան համար ծախք եղած է 228,500 եղիպա . սակի :

— Աղէքանդրիոյ մէջ Մուհամմէտ Ա- լիի հրապարակին վրայ հայ մը ձերբակալ- ուած է , որ Կ . Պօլսէն գեռ նոր հասած երկու թուրք . պաշտօնեաներու մահու ըս- պառնալիք ըրած է , կը գրէ Յար ս'Ա- նիստանի :

ԱԶԴ

Կը խնդրեմ յարգոյ հասարակութենէն որ Յարպա մեկնելէս առաջ , ամեն անոնք որ ինձ հետ կարգադրելիք մի գործ ունին մինչև Յունիս 2 գիւմեն ուղղակի հասցէիս որ է՝

ԱՐՄԵՆԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ
Boite Postale N. 140

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Յ . ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՍԻՐ

Պագար-Մուրուր ք/ա 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձևութեանց համապատասխանող , սոքերը կոշտերու ցա- ւերէն ալատ պահող և դիմացկուն կօշիկ- ներ :

Դիմեցէ՛ք ի Պագար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիւրեան եղ- բարց , որոնց գործածած ապրանքներու տու- կանութիւնն և ձևերու մասին ունեցած հո- գածութիւնը ամեն տարակոյտէ վեր է :

Պէշիւրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ դիմել ի- րենց . ապահովապէս մնալուն յաճախորդ պիտի լինիք :

1—24

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ


Բաւական ժամանակէ ի վեր տպագ- րութիւնը թէև աւարտած էր , սակայն ինչ ինչ պատճառներով հեղինակին կողմէն վաճառման տեղը որոշուած չ'ըլլալով՝ ծա- նուցումը յապաղեցինք . ուստի տպագրա- կան պարտադրութիւն կը համարինք այժմ ծանուցանել անոր աւարտումը այն ընթեր- ցասէր ազգայնոց , որոնք կը սիրեն ազգ- ու հայրենիք , և անոնց վերաբերեալ սրբ- տագրաւ ողբերգութիւն մը :

Սոյն երկատիրութենէն գնել փափա- քողք կրնան դիմել Հեղինակին , որ ամեն օր կէս օրէ վերջ ժամը 3 — 5 «Արշալոյս»-ի Խմբագրատունը կը գտնուի :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՀԻ ՄԻԶՈՒԱ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 553 ՄԻԼՈՆ
Ապահովագրեալներուն կը բաժ- նէ ամենէն աւելի շահաբաժինները :
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գու- մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրև է ըն- կերութենէ մէկ միլիար աւելի է :
Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա- յացուցիչ ի Գաւիթէ
ԳՈՐԾԱԿԱԼ Ի ՄՈՒՍԳԻ
— ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԵՅԻՐ
Պալատի շինարար . Խաղնէտարի սեփականութիւն , Պշիւթօլ Սթէլի ճիշդ դիմաց , Գաֆէ Տը Լա Պուրի կից :
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲՈՂԱՔԵՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄՍԱՆԱՃՈՂԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կ'որի մեքենաները Սինկլի Երկրի ներս կը տանց կէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :
400 Ե աւելի վիսյակներով և մեքայներով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ .
ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիէլերալիան արուեստաներիսիւն մէջ ստացած է .
ՀԱԳՔԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅՔԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԿԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅՔԱՅԹԻՉ Ն . Բ . ՆՏԻՎԱԿԱՆ ՏՈՆ
Չրի գասեր և նորոգու- թիւններ , Սինկլի մեքենա- յից համար , յաճախորդաց տաներուն մէջ .
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւնն էն . Մեքենայից և նորոգութիւն ամեն կաշի Սինկլիայից



ՀՐԷՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 19 ՄԱՅԻՍ 1901

3030	4000	2550	1203	216	2368
2692	2699	3047	3246	3326	3731
3908	4465	5457	6078	6156	6292
7533	7759	7795	7987	8416	8662
8808	8929	9300	9569	9874	9910

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱԿՈՒ 24 ՄԱՅԻՍ 1901

698	4475	1884	8207	163	568
6219	9702	7711	557	1435	8303
1539	4991	6344	7121	92	5176
4940	1735	213	1978	9925	1876
			976	9981	3736

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂՔԱՎԱՅԱԹԱՏՅՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900
ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԻԶԲԸ
Օսմանիյի ղեկարանի ղիւնացի իտղիկ մեք .
Ժողովրդական Տպարանին մէջ կը պատ- րաստուին .
Այցեխարսեր , Երջարտալաւ մեր , Գիտելու , Հրաւիրագրեր , Մահազղներ , Տեղեկագիրներ , Կանոնագիրներ , Տոմար և այլ և այլ տպա- րանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն .
1. ԲՆԱՇԵՆԱՐՀԻԿ ԲՈՒՍՐԱՆԻ Ի Ա . Ե Բ . պրակներն :
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի թուրքիս մուտքը , ինչպէս կը լսենք , արգելուած է :
3. ՀԱՒԱՔԱՌՈՑ հայոց ժողովրդական երգերու :